

Ատրպէյճանի Մտաւորականութեան Հրձիգ Յայտարարութիւնը

Պաքուի մէջ վերջերս Ատրպէյճանի «Ինտելիկենցիա»-ն ժողովրդային ներկայացուցիչներու հետ հանդիպումէ մը ետք հրապարակած էր հրձիգ յայտարարութիւն մը, որ կը միտէր ազերի ժողովուրդը զօրակոչի ենթարկել «Լեռնային Ղարաբաղի օգնութեան» համար: Պաքուի մտաւորականութիւնը կ'անարգէր նաեւ հայ «ազգայնականները»:

Այդ յայտարարութեան հակազդեց էին Հայաստանի Կոմկուսի Կենտրոնը եւ Հայաստանի եւ Արցախի ներկայացուցիչները:

Ազերի մտաւորականութեան յայտարարութիւնը կը սկսէր հետեւեալ բառերով. —

«Ատրպէյճանի սփանջելի անկիւնը, հանճարներու ծննդավայր Ղարաբաղը, ուր ամէն քար հազարաւոր տարիներու յուշեր ունի, խաղաղ չէ մէկուկէս տարիէ ի վեր»:

Հայ ազգայնականները եւ Լեռնային Ղարաբաղի իրենց հետեւորդները, որոնք կը հրահրեն երազը Մեծ Հայաստանի մը եւ կը փորձեն խախտել Ատրպէյճանի հողային ամբողջականութիւնը, օրէ օր կը սաստկացնեն իրենց բրոքականտան հանրապետութեան ազգային իշխանութեան դէմ, ու կը փորձեն քախումի մէջ ներհաշի իր ազնուութեամբ, համ-

բերատարութեամբ, ինտերնացիոնալիզմով ծանօթ ատրպէյճանցի ժողովուրդը:

Վայրագ ազգայնականներ, որոնք առաջին անգամը չէ որ այս դարում Ատրպէյճանցիները դուրս կը հանեն իրենց հայրենիքէն, այժմ կը ձգտին իրենց անմարդկային ծրագիրները իրագործել Լեռնային Ղարաբաղի, Շահումեանի շրջանի եւ Նախիջեւանի մէջ:

Անոնք ամէն միջոց կը գործածեն գրպարտութիւն եւ սուտը, հակասական լուրեր, սպառնալիքներ եւ ոտնձգութիւններ Ատրպէյճանի բնակչութեան հասցէին: Այս բոլորը եւ հազարաւոր ատրպէյճանցիներու ողբերգական ցակատագիրը, որոնք ստիպողաբար լքեցին Հայաստանի մէջ իրենց տունները, պատճառ դարձան որ համբերութեան բաժակը յորդի: Լեռնային Ղարաբաղի կառավարման Յատուկ Կոմիտէն նաեւ ձախողեցաւ կացութիւնը «հաւասարակշռելու մէջ»:

Ըսելէ ետք թէ Լեռնային Ղարաբաղի մէջ կացութիւնը անտանելի դարձած է, ատրպէյճանցի մտաւորականութիւնը կը գրէ. «Անոնք, որոնք գիտեն թէ Լեռնային Ղարաբաղի հողը պատմականօրէն պատկանած է եւ յաւիտեանս պիտի պատ-

կանի Ատրպէյճանի, կը թունաւորեն իրենց իսկ ազգին գիտակցութիւնը, եւ ուշ կամ կանուխ, պատիժ պիտի կրեն, որ աստիճանի վրայ ալ գըտնուին»:

Ինքնագովութենէ ետք, թէ իրենք միշտ համբերատար եղած են եւ տեղի չեն տուած գրգռութիւններու, ի միջի այլոց փերեսթրոյքայի սիրոյն, ատրպէյճանցի ժողովուրդին կոչ կ'ըլլայ, «զօրակոչելու իր ամբողջ քարոյական, քաղաքական եւ ֆիզիքական ուժերը, քայքայելու այդ սել ուժերը», քանի պէտք է «պահպանել մեր հայրերէն եւ մեծ հայրերէն մեզի փոխանցուած ժառանգը՝ հողին հանդէպ հաւատարմութեան»: Այս օրերուն անհրաժեշտ է մանաւանդ ուժերու միութիւնը, պէտք է նաեւ «մեր ձայնը միացնենք, մէկ անձի պէս, Շուշիի, Խոնալուի, Կրկժանի, ամբողջ Ղարաբաղի եւ մերձակայ շրջակայքի՝ Աղտամի, Լաչինի, Գլպաժարի, Միր-Պաշիբի եւ Հայաստանի սահմաններու Ջանգեզուրի, Նախիջեւանի ժողովուրդի ձայներուն», որպէսզի «մեր զաւակները վախի եւ վտանգի մէջ չապրին»:

Ատրպէյճանցի մտաւորականները կ'առնեն հետեւեալ որոշումը. —

1. Պէտք է վերջ տրուի Լեռնային Ղարաբաղի արուեստական հարցին: Մարզին մէջ պէտք է վերահաստատուի օրինական եւ գերիշխան իրաւունքները Ատրպէյճանի հանրապե-

տութեան, եւ ի. Միութեան: Միանգամ ընդմիշտ բոլորին կը յայտարարենք, որ Լեռնային Ղարաբաղը ատրպէյճանական հող է, եւ ոչ ոքի անկէ թիգ մը հող պիտի տանք: Լեռնային Ղարաբաղը այնքան անբաժան է Մեծագոյն Ղարաբաղէն, որքան սիրտը՝ հոգիէն:

2. Ատրպէյճանի ժողովուրդը կը պահանջէ շուտափոյթ պատժումը այն ծայրայեղականներուն, որոնք ապօրէն պահանջներ կը ներկայացնեն ուրիշներու պատկան հողերէն: Օրէ օր աւելի ձգտուածութիւն կը յառաջացնեն միջազգային յարաբերութեան մէջ եւ թուր կը գործածեն՝ տրամաբանութեան դէմ: Այս ձեւով անոնք կը հարուածեն ամբողջ երկիրը, որ կ'ապրի քարոյ պահեր, եւ անդարմանելի վնասներ կը պատճառեն:

3. Կառավարման Յատուկ Կոմիտէն կը պահանջեն ամենաարագ ձեւով վերջ մը դնել Լեռնային Ղարաբաղի ահաբեկչական եւ անմիջապէս զգուշացնել Հայաստանի Հանրապետութիւնը միջամուխ ըլլալու Ատրպէյճանի ներքին գործերուն:

4. Լեռնային Ղարաբաղ եւ իր շրջակայքը ապրող ատրպէյճանցիներու ապահովութեան համար, առաջին առնել սխալ տարածայնութիւններու, վերջ տալ ոճրային գործունէութեան եւ ժողովրդային միասնականութիւն ստեղծել ծայրայեղ կացութեան շուրջ, ստեղծելով կոմիտէ մը Ղարաբաղի օգնութեան: